ՍՊՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տպորտի կառավարման տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ ՍԿՏՀ) ՝ տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, ինչպես նաև հաշվետվությունների ստացման և հրապարակման էլեկտրոնային միասնական համակարգ է, որի միջոցով իրականացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի ոլորտի վարչական ռեգիստրների վարումը։ ՍԿՏՀ համակարգում պահվող տվյալները (տեղեկությունները) համալրվում են վարչական բնույթի դիտարկումների հիման վրա, իսկ ՍԿՏՀ–ում գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում մարզական բարձր նվաճումների, այդ թվում հաշմանդամային սպորտի վարչական ռեգիստրների ամբողջականությունը ապահովելու նպատակով։